



## 2020 թ. Շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողովի մասին հաճախակի տրվող հարցեր

### 1. Ինչու՞ պետք է հոգ անեմ շրջանների վերադասավորման մասին

Կալիֆորնիայի մարդկանց ունեցած ամենամեծ ուժերից մեկը իրենց ներկայացուցիչներին ընտրելն է՝ իրենց կառավարության գործերը վարելու համար: Շրջանների սահմանների կազմաձևումը կարող է տարբերություն անել քվեարկողների ձայնը հզորացնելու և առավելագույնի հասցնելու կամ այդ ձայները նվազագույնի հասցնելու և խլացնելու միջև: Կալիֆորնիայի անկախ Շրջանների վերադասավորման քաղաքացիական հանձնաժողովը (Citizens Redistricting Commission) («Հանձնաժողով») պարտավորվում է գծագրել արդար շրջաններ, որոնք արտացոլում են ո՛չ թե գործող քաղաքական գործիչների, այլ՝ ժողովրդի լավագույն շահերը:

Ձեր համայնքի մասին բարձրաձայնելը կարևոր նշանակություն ունի երաշխավորելու համար, որ համայնքային սահմանագծերը գծվել են այնպես, որ ձեր համայնքը հնարավորինս ամբողջական մաա և խմբավորված՝ մոտակա համայնքների հետ, որոնք ունեն նմանատիպ հետաքրքրություններ: Սա ապահովում է, որ ձեր ձայնը լսեն ձեր ընտրած ղեկավարները՝ ձեր երեխայի կրթության որակի և ֆինանսավորման կամ ձեր հարկի դրույքաչափերի վճռման որոշումներ կայացնելիս:

Ձեր ներդրումը կարևոր է քաղաքական նոր սահմանների ձևավորման համար:

### 2. Ինչպե՞ս ներգրավվեմ

Կան Հանձնաժողովի մոտ ներդրում կատարելու մի քանի եղանակներ՝

#### Հանրային հավաքի ընթացքում՝

Հանձնաժողովը կանցկացնի լսումներ, որտեղ կարող եք ներդրում կատարել հեռախոսով՝ հանդիպման ժամանակ կամ էլեկտրոնային միջոցով՝ հանդիպումից առաջ: Առաջիկա հանրային ներդրման հավաքների մասին ավելին կարող եք պարզել այցելելով մեր կայքի *Հանդիպումներ (Meetings)* բաժինը:

#### Էլեկտրոնային միջոցով՝

Կարող եք նաև Հանձնաժողովի մոտ ներդրում կատարել կայքի միջոցով՝ Էլ-փոստ ուղարկելով՝ [VotersFirstAct@crc.ca.gov](mailto:VotersFirstAct@crc.ca.gov) կամ ձեր քարտեզը գծելով «Գծեք իմ համայնքը» (Draw My Community) գործիքի միջոցով և այն Հանձնաժողովին ներկայացնելով, այցելելով այս կայքը՝ [DrawMyCACommunity.org](http://DrawMyCACommunity.org).

#### Հեռախոսով՝

(916) 323-0323

#### Գրավոր՝

Ձեր ներդրումը կարող եք փոստով ուղարկել այս հասցեով՝  
California Citizens Redistricting Commission  
721 Capitol Mall, Suite 260  
Sacramento, CA 95814



### Համայնքային հիմքով կազմակերպության (CBO) միջոցով՝

Կան բազմաթիվ CBO-ներ, որոնք աշխատում են համայնքների հետ և համագործակցաբար ներդրում են ներկայացնում Հանձնաժողովին:

### **3. Ինչպե՞ս նկարագրեմ իմ համայնքը**

Հանձնաժողովին անհրաժեշտ է ձեզանից չորս գլխավոր բաներ իմանալ ձեր համայնքի մասին՝

- Տնտեսական, սոցիալական և/կամ մշակութային շահագրգռությունները, որոնք շաղկապում են ձեր համայնքը:
- Ինչու՞ ձեր համայնքը շաղկապված պետք է պահել արդար և արդյունավետ ներկայացուցչության համար:
- Որտեղ է գտնվում ձեր համայնքը:
- Մոտակա ո՞ր տարածքների հետ ձեր համայնքը ցանկանում է խմբավորվել կամ ոչ:

Օգտագործեք «Գծեք իմ համայնքը» (Draw My Community) գործիքը՝ քարտեզ գծելու և ձեր համայնքը նկարագրելու համար, այցելելով այս կայքը՝

[DrawMyCACommunity.org](http://DrawMyCACommunity.org).

### **4. Ի՞նչ է շահագրգիռ համայնքը**

Կալիֆորնիայի Սահմանադրությունը շահագրգիռ համայնքը սահմանում է որպես մի բնակչություն, որը կիսում է ընդհանուր սոցիալական և տնտեսական շահագրգռություններ, որոնք պետք է ներառվեն մի առանձին շրջանում, նրա արդյունավետ և արդար ներկայացուցչության համար: Նման կիսված շահագրգռությունների օրինակներ են քաղաքային, գյուղական վայրերի, արդյունաբերական տարածքների կամ գյուղատնտեսական տարածքների համար ընդհանուր շահագրգռությունները և այն տարածքները, որտեղ մարդիկ բաժնեկցում են նման կենսամակարդակ, օգտագործում են նույն փոխադրական միջոցները, ունեն աշխատանքային նման հնարավորություններ, կամ նրանց մատչելի են ընտրական գործընթացին առնչվող հաղորդակցության նույն լրատվամիջոցները: Մշակութային համայնքները ևս կարող են շահագրգիռ համայնքներ լինել: Շահագրգիռ համայնքները հարաբերություններ չեն ներառում քաղաքական կուսակցությունների, գործող քաղաքական գործիչների կամ քաղաքական թեկնածուների հետ:

### **5. Ինչու՞ Հանձնաժողով ունենք**

Ամեն 10 տարին մեկ, դաշնային կառավարությունը թարմացված մարդահամարի տվյալներ հրապարակելուց հետո, Կալիֆորնիան պետք է վերագծի իր Կոնգրեսական, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի շրջանների սահմանները, որպեսզի շրջանները ճիշտ արտացոլեն նահանգի բնակչությունը:

### **6. Ի՞նչ է Հանձնաժողովը**

Հանձնաժողովը Կալիֆորնիայի քաղաքացիների մի խումբ է, որն ընտրվում է յուրաքանչյուր տասը տարին մեկ՝ հանրային դիմումի և վերանայման գործընթացով, որը պատասխանատու է Կոնգրեսի, Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի համար շրջանային սահմանագծեր գծելու:



համար: Մինչ 2010 թվականը, Կալիֆորնիայի օրենսդիրներն իրենք էին գծում իրենց շրջանի սահմանագծերը:

Մինչ 2010 թվականը, Կալիֆորնիայում օրենսդիրներն էին գծում սահմանագծերը: 2008 թվականին Կալիֆորնիայի քվեարկողները լիազորեցին ստեղծումը անկախ Հանձնաժողովի՝ երբ անցկացրին Քվեարկողները ՆԱԽ օրենքը (Voters FIRST Act): Այն լիազորում է, որ Հանձնաժողովը գծի նոր շրջանային սահմանագծեր Նահանգային Սենատի, Նահանգային Ժողովի և Նահանգային հավասարեցման խորհրդի համար: 2010 թվականին Կոնգրեսի համար Քվեարկողները ՆԱԽ օրենքը Կոնգրեսական շրջանների (Voters FIRST Act for Congress) գծման պատասխանատվությունը հանձնեց Հանձնաժողովի իրավասության:

Շրջանների վերադասավորման իշխանության խլումը ընտրված պաշտոնյաներից նշանակում է երաշխավորել մի արդար և թափանցիկ գործընթաց, որը գործընթացից վերացնում է քաղաքական ազդեցությունը: Նախընտրական (Gerrymandering) մեքենայությունը գործելակերպ է, որը նպատակաուղղված է որոշակի կուսակցության կամ խմբի համար անարդար քաղաքական առավելության հաստատման՝ շահարկելով շրջանի սահմանները: Նախընտրական մեքենայությունում օգտագործվող գլխավոր ռազմավարություններն են «ճեղքումը» (այսինքն՝ հակառակորդ կուսակցության աջակիցների քվեարկելու ուժի նոսրացումը բազմաթիվ շրջաններով մեկ) և «կուտակումը» (հակառակորդ կուսակցության քվեարկման ուժի կենտրոնացումը մեկ շրջանում՝ նրանց քվեարկման ուժը ուրիշ շրջաններում տկարացնելու համար):

## 7. Ո՞վ կարող է Հանձնաժողովում ծառայել

Հանձնաժողովը բաղկանում է 14 անդամից՝ հինգ Դեմոկրատ անդամներ, հինգ Հանրապետական անդամներ և չորս անդամներ, ովքեր այս կուսակցություններից ոչ մեկից չեն:

Գրանցված քվեարկողները իրավասու են ծառայելու Հանձնաժողովում, եթե շարունակաբար գրանցվել են Կալիֆորնիայում նույն քաղաքական կուսակցության մոտ, կամ ոչ մի քաղաքական կուսակցության մոտ, Հանձնաժողովին նշանակվելուն անմիջապես նախորդող հինգ տարիներին. և նրանք քվեարկել են նահանգի վերջին երեք ընդհանուր ընտրություններից առնվազն երկուսում:

Դիմումի ամսաթվին նախորդող 10 տարվա ընթացքում քվեարկողը չի կարող ծառայել Հանձնաժողովում, եթե քվեարկողը կամ նրա անմիջական ընտանիքի անդամը նշանակվել են, ընտրվել կամ եղել է Կալիֆորնիայի կոնգրեսական կամ նահանգային գրասենյակի թեկնածու. ծառայել է որպես Կալիֆորնիայի քաղաքական կուսակցության կամ Կալիֆորնիայի կոնգրեսական կամ ընտրովի նահանգային գրասենյակի թեկնածուի նախընտրական հանձնաժողովի պաշտոնյա, աշխատակից կամ վարձատրվող խորհրդատու. կամ եղել է գրանցված շահախմբի անդամ (լոբբիստ):

## 8. Հանձնակատարներն ինչպե՞ս են ընտրվել

Սկզբնական և լրացուցիչ դիմումները փոխանցվել էին Դիմորդների վերանայման հանձնաժողովին (խորհուրդ), որը բաղկացած է Կալիֆորնիայի նահանգային ստուգողից երեք անկախ ստուգողներից: Խորհուրդը բոլոր դիմումները քննելուց



հետո, ընտրել է «առավել որակավորված դիմորդներից» 120-ը՝ ըստ կուսակցական պատկանելության բաժանված երեք հավասար ենթախմբերի, որոնք այնուհետև հարցազրույց են ունեցել անձամբ: Դիմորդների քանակն այնուհետև նվազեցվել է 60-ի՝ երեք հավասար ենթախմբերում:

Խորհուրդը այդ 60 դիմորդներին ներկայացրել է Կալիֆորնիայի նահանգի օրենսդիր մարմին, որտեղ ղեկավարությունը հնարավորություն ուներ ցուցակից հանելու մինչև 24 անուն, յուրաքանչյուր ենթախմբից՝ ութ: Ենթախմբերից չհանված դիմորդների անունները այնուհետև ներկայացվել էին Կալիֆորնիայի նահանգային ստուգողին:

Կալիֆորնիայի նահանգային ստուգողը պատահականորեն քաղել էր երեք ենթախմբում մնացած անուններից. երեք դեմոկրատ, երեք հանրապետական և երկու անձ այդ երկու կուսակցություններից ոչ մեկից: Այս ութ դիմորդները դարձել էին Հանձնաժողովի առաջին ութ անդամները:

Հանձնաժողովի առաջին ութ անդամներն այնուհետև ընտրել էին Հանձնաժողովի վերջին վեց անդամներին՝ երեք ենթախմբերից յուրաքանչյուրի համար ընտրելով երկու հանձնակատարների:

## **9. Ինչքա՞ն ժամանակ են հանձնակատարները սպառում իրենց պարտականությունների կատարման համար**

Չնայած չկա նվազագույն կամ առավելագույն ժամանակ, որը անդամները պետք է սպառեն Հանձնաժողովի հետ կապված աշխատանքների կատարման համար, սովորաբար այդպիսի աշխատանքը շաբաթական սպառում է 10-ից 40 ժամ, ավելի քիչ ժամանակ՝ սկզբում, և ավելի շատ ժամանակ՝ քարտեզների վերջնականացման վերջնաժամկետը մոտենալու հետ:

Հանձնաժողովը գործում է որպես ուրույն եուրյուն և վարձում է իր պարտականություններին օգնող անձնակազմ: Բացի այդ, Հանձնաժողովը սահմանում է իր սեփական ժամանակացույցը. այն որոշում է, թե որտեղ պետք է հանդիպել իր գործերով զբաղվելու համար. որքան հաճախ է այն հանդիպելու. ե՞րբ և որտե՞ղ անցկացնել հանրային հանդիպումներ՝ հանրության ներդրման դիմելու համար. որքան անձնակազմ վարձել և ինչ նպատակներով. և այլ որոշումներ, ըստ անհրաժեշտության:

## **10. Քանի՞ հանրային ներդրման հանդիպումներ են անցկացվելու**

Հանձնաժողովը ենթակա է Bagley-Keene Բաց հանդիպման օրենքին, որը պահանջում է, որ որևէ հանդիպում, որը հարցերի որոշման կամ նույնիսկ տեղեկություն ստանալու համար բաղկացած է Հանձնաժողովի ինը կամ ավելի անդամից, պետք է անցկացվի հանրության առաջ: Հաշվի առնելով դա, Հանձնաժողովի կողմից անցկացվող հանրային լսումների քանակը ամբողջովին Հանձնաժողովի հայեցողության է թողնված: Նմանապես, Հանձնաժողովը կորոշի, թե արդյո՞ք լսումներին մասնակցելու են Հանձնաժողովի բոլոր անդամները, թե պարզապես անդամների մի ենթախումբ:



## 11. Ի՞նչ օրենքներ են կանոնակարգում Յանձնաժողովը

1. Կալիֆորնիայի Սահմանադրություն, Յոթերորդ Կարգադրում XXI
2. Կառավարական օրենսգիրք (8251 - 8253.6 Բաժիններ) և Ընտրությունների օրենսգիրք
3. [Կալիֆորնիայի կանոնակարգերի օրենսգիրք](#)
4. ԱՄՆ Սահմանադրություն
5. ԱՄՆ օրենսգիրք
6. Զվտարկության իրավունքների օրենք (Voting Rights Act)

## 12. Ի՞նչ է Զվտարկության իրավունքների օրենքը և ինչու՞ կարևոր է այն

Մինչև 1965 թ. դաշնային Զվտարկության իրավունքների օրենքի ընդունումը, շատ նահանգների գործելակերպը պահանջում էր, որ որակյալ աֆրոամերիկացիները գրագիտության ստուգարքներ հանձնեն՝ քվեարկելու նպատակով գրանցվելու համար: Այլ նահանգներ թույլ էին տալիս անձին գրանցվել քվեարկելու համար միայն այն դեպքում, եթե իր պապին թույլատրվում էր քվեարկել: Զվտարկության իրավունքների օրենքը անօրինական հոչակեց այս գործելակերպերը:

1970-ականներին, Կոնգրեսը լայն տեղեկություններ է լսել այն մասին, թե ինչպես են նահանգները և տեղական ինքնակառավարման մարմինները գծել շրջանային սահմանագծերը և շահարկել են ընտրությունների կանոնները, որպեսզի արգելակեն նոր գրանցված աֆրոամերիկացի քվեարկողների՝ իրենց նախընտրած թեկնածուներին ընտրելու հնարավորությունը: Այսօր, Զվտարկության իրավունքների օրենքը պաշտպանում է բոլոր ցեղային և լեզվական փոքրամասնություններին, այդ թվում՝ աֆրոամերիկացիներին, ասիացի ամերիկացիներին, լատինացիներին, բնիկ ամերիկացիներին և Խաղաղ օվկիանոսի կղզիների բնակիչներին:

Յանձնաժողովը նկատի կառնի հանրային ներդրումը և իրավաբանական և փորձագիտական խորհրդատվությունը՝ երաշխավորելու իր վերջնական քարտեզների համապատասխանությունը Զվտարկության իրավունքների օրենքի պահանջմունքներին:

Ավելի մանրամասն նկարագրության համար, թե Զվտարկության իրավունքների օրենքն ինչպես է գործում, այցելեք ԱՄՆ Արդարադատության նախարարության կայքը՝ <http://www.justice.gov/crt/about/vot/redistricting.php>:

## 13. Ի՞նչ չափանիշներ են օգտագործվում քարտեզներ գծելիս

Կալիֆորնիայի նահանգային սահմանադրության համաձայն, Յանձնաժողովը շրջանային քարտեզների գծման պահին պետք է հետևի հետևյալ չափանիշներին, այս հերթականությամբ՝

1. Շրջանները պետք է ունենան հավասար բնակչություն, որպեսզի համապատասխանեն ԱՄՆ Սահմանադրության:
2. Շրջանները պետք է ենթարկվեն Զվտարկության իրավունքների օրենքին, երաշխավորելու համար փոքրամասնությունների՝ իրենց ցանկացած ներկայացուցիչներին ընտրելու արդար պատեհությունը:
3. Շրջանները պետք է գծագրվեն անընդմիջաբար, որպեսզի շրջանի բոլոր մասերը միմյանց հետ կապակցված լինեն:



4. Շրջանները պետք է հնարավորինս նվազագույնի հասցնեն քաղաքների, վարչաշրջանների, թաղամասերի և շահագրգիռ համայնքների բաժանումը:
5. Շրջանները պետք է լինեն աշխարհագրորեն կուռ, որպեսզի բնակչության մոտակա տարածքները չշրջանցվեն ավելի հեռավոր բնակչության համար: Այս պահանջմունքը վերաբերում ոչ թե ձևին, այլ՝ խտությանը: Մարդահամարային թաղամասերը չի կարելի բաժանել:
6. Հնարավորության դեպքում, յուրաքանչյուր Սենատի շրջան պետք է բաղկացած լինի երկու ամբողջական և հարակից ժողովների շրջաններից, իսկ Հավասարեցման խորհրդի շրջանները պետք է բաղկացած լինեն 10 ամբողջական և հարակից Նահանգային Սենատի շրջաններից:

Բացի այդ, քարտեզի ստեղծման ժամանակ չի կարող նկատի առնվել որևէ գործող քաղաքական գործիչի կամ քաղաքական թեկնածուի բնակության վայրը, և շրջաններ չեն կարող գծվել՝ գործող քաղաքական գործիչի, քաղաքական թեկնածուի կամ քաղաքական կուսակցության նախընտրելու կամ նրան խտրականության ենթարկելու համար:

#### **14. Ինչպե՞ս պիտի վավերացվեն նոր շրջանի սահմանները**

Հանձնաժողովից պահանջվում է սահմանել աշխարհագրական սահմանները Կոնգրեսական շրջանների, Նահանգային Սենատի շրջանների, Նահանգային ժողովի շրջանների և Նահանգային հավասարեցման խորհրդի համար շրջանային սահմանագծեր գծելու համար, որպեսզի դրանք պարունակեն տրամաբանորեն հավասար բնակչություններ: 2010 թ. Հանձնաժողովը ձեռնարկեց հանդիպումների ամբողջ նահանգում՝ շահագրգիռ համայնքները բացահայտելու համար: Հանդիպումներից շատերը տեղի էին ունենում երեկոներին և հանգստյան օրերին՝ բոլոր կալիֆորնիացիների համար դրանք ավելի մատչելի դարձնելու նպատակով:

Հանձնաժողովը շրջանների աշխարհագրական սահմանների շուրջ համաձայնելուց հետո, շրջանները կցուցադրվեն չորս քարտեզների վրա. մեկ քարտեզ ցույց է տալիս վերանայված Կոնգրեսական շրջանները, երկրորդ քարտեզը, ցույց է տալիս վերանայված Նահանգային Սենատի շրջանները, երրորդ քարտեզը, ցուցադրում է վերանայված Նահանգային ժողովի շրջանները, և չորրորդ քարտեզը ցույց է տալիս Նահանգային հավասարեցման խորհրդի շրջանները:

Վավերացվելու համար, յուրաքանչյուր քարտեզ պետք է ստանա դրական քվեի առնվազն երեք հանձնակատարների, ովքեր դեմոկրատ են, երեք հանձնակատարների, ովքեր հանրապետական են և երեք հանձնակատարների՝ այդ կուսակցություններից ոչ մեկից: Վերջնական քարտեզները Հանձնաժողովի կողմից վավերացվելուց հետո, քարտեզները ներկայացվում են Նահանգային քարտուղարին մի զեկույցով, բացատրելով, թե Հանձնաժողովն ինչ հիմքի վրա է կայացրել իր որոշումները:

#### **15. Ե՞րբ է Հանձնաժողովը ամբողջացնելու քարտեզները**

Չնայած Կալիֆորնիայի Սահմանադրությունը վերջնաժամկետ է սահմանում 2021 թվականի օգոստոսի 15-ի քարտեզները հաստատելու համար, Կալիֆորնիայի Գերագույն դատարանը որոշում կայացրեց 2020 թ. Հունիսի 17-ին, որ Հանձնաժողովը պետք է ունենա մինչև 2021 թ. Դեկտեմբերի 15-ը՝ իր քարտեզները Կալիֆորնիայի Նահանգային քարտուղարին ներկայացնելու համար, մարդահամարի



արդյունքների հրապարակման սպասվող ուշացման պատճառով: Եթե մարդահամարի արդյունքները հետաձգվեն 2021-ի հուլիսի 31-ից այն կողմ (ինչը մարդահամարի բյուրոն արդեն նշել է, որ հավանական է), ապա Հանձնաժողովի վերջնաժամկետը կհարմարեցվի համապատասխանաբար:

